ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 25.08. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 15-ը (տասնհինգ):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
4. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
7. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
8. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
9. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
10. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
11. Լ. Մարտիրոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ
12. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
13. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
14. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
15. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված արտակարգ դրության պայմաններում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում 2020-2021 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպման մասին

Հաղ.՝ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

2. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված արտակարգ դրության պայմաններում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում 2020-2021 ուստարում նոր ուսումնական գործընթացը կազմակերպման մասին

Պարոն Սերոբյանը նշեց, որ արտակարգ դրության պայմաններում նոր ուսումնական տարին սկսելու համար պարետատան ցուցումներից բացի, պրոռեկտորների, տարբեր ստորաբաժանումների ղեկավարների հետ քննարկումների արդյունքում մշակվել են ուսումնական պրոցեսի կազմակերպման կարգը, անվտանգության կանոնների պահպանման, լսարանների տեղակայման ու կահավորման տարբերակները:

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ ըստ ԿԳՄՄՆ-ի համապատասխան հրահանգի, ս.թ.-ի սեպտեմբերի 1-ից մինչև 15-ը համալսարան կհաճախեն բակալավրի առկա ուսուցման առաջին կուրսի ուսանողները, 320 ուսանողներ, որոնք դասապրոցեսին մասնակցելիս և ընդհանրապես համալսարանում գտնվելու ընթացքում պետք է պահպանեն դիմակ կրելու պահանջը: Դասերը կսկսվեն ժամը 9:30-ին՝ երկհերթ, 70 բոպե տևողությամբ:

Բակալավրի առկա ուսուցման 2-րդ, 3-րդ, 4-րդ և մագիստրատուրայի ուսուցման 1-ին, 2-րդ կուրսերի ուսանողների համար դասերը կկազմակերպվեն օնլայն, միայն լաբորատոր և գործնական աշխատանքների համար ուսանողները որոշակի օրերի կհաճախեն համալսարան՝ ըստ նախօրոք կազմված դասացուցակի:

Այնուհետև պարոն Սերոբյանը շարունակեց, որ ուսանողները համալսարան կմտնեն մի քանի մուտքերով: Մանկավարժության ու սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետների ուսանողները համալսարան մուտք կգործեն ձախակողմյան շքամուտքից, իսկ բնագիտամաթեմատիկական ու հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետների համար նախատեսված է աջակողմյան շքամուտքը: Ռազմական ամբիոնի ոսանողներն իրենց պարապմունքները կանցկացնեն ՇՊՀ-ի ռազմական ամբիոնի համար նախատեսված մասնաշենքում՝ Շիրակացի 21/5 հասցեում: Արվեստի ամբիոնի ուսանողնեձրի համար պարապմունքները կկազմակերպվեն նույնպես Շիրակացի 21/5 հասցեում: Համալսարան մտնելիս ուսնողներն ու աշխատակիցները կջերմաչափվեն: Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ այս աշխատանքը կատարվելու է բուհի բուժքրոջ և անվտանգության աշխատակցի կողմից, սակայն նրանք չեն կարողանա մի քանի մուտքերի և ուսանողների և աշխատակիցների նման քանակի պայմաններում երկուսով իրականացնել ջերմաչափման

աշխատանքները, այդ իսկ պատճառով խնդրեց ռեկտորատի անդամներին առաջարկություններ ներկայացնել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ն. Ավետիսյանը, Թ. Մելիքյանը, Ռ. Մարդոյանը, ՕՖ. Հովհաննիսյանը և այլոք:

Հնչեցին բազմաթիվ կարծիքներ, ռեկտորատի անդամները կանգ առան մի առաջարկության վրա, ըստ որի առաջին կիսամյակի ընթացքում բուհում ջերմաչափման աշխատանքներ իրականացնելու գործում, կամավորության սկզբունքով, ընդգրկել նաև ուսանողներին՝ խրախուսելով նրանց ուսման վճարի 30 տոկոսի զեղչի փոխհատուցման տրամադրմամբ:

Պարոն Սերոբյանը նշեց, որ ինքը ռեկտորատի նիստից հետո հանդիպում է կազմակերպել բուհի ուսխորհրդի նախագահի և անդամների հետ և այս առաջարկը մանրամասն քննարկելուց հետո կներկայացնի ռեկտորատին:

Անդրադառնալով նոր ուսումնական տարում դասապրոցեսների հետ կապված կազմակերպչական հարցերին, պարոն Սերոբյանը դեկաններին հանձնարարեց ֆակուլտետներում կազմակերպել հերթապահություն՝ ուսումնական պրոցեսի կազմակերպման կարգին, անվտանգության կանոնների պահպանմանը պատշաճ հետևելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Արտակարգ դրության պայմաններում նոր ուսումնական տարին սկսել պահպանելով պարետատան ցուցումներն ու անվտանգության կանոնները:
2. Հանձնարարել Ս. Շահպարոնյանին և Գ. Ասատրյանին ուսումնական գործընթացի կազմակերպումն ZOOM հավելվածով իրականացնելու համար ուսումնասիրել և ռեկտորատի անդամներին ներկայացնել ZOOM-ով առցանց ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները::
3. Սեպտեմբերի 1-ին կազմակերպել բակալավրի առկա ուսուցման առաջին կուրսի ուսանողների ուսումնական գործընթացը՝ դասերը սկսել ժամը 9:30-ին՝ երկհերթ, 70 րոպե տևողությամբ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Պարոն Սերոբյանի կողմից ամբիոնի վարիչներին հանձնարարվեց ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն Թ. Խաչատրյանին ներկայացնել առաջին կուրսեցիների համար առաջին կիսամյակի ընթացքում ուսումնասիրվող առարկաների անհրաժեշտ գրականության ցանկը, որպեսզի գրադարանում, հնարավորության սահմաններում, յուրաքանչյուր կուրսի համար այդ գրքերը, ըստ կուրսի ուսանողների քանակի, առանձնացվի և փոխանցվի նրանց:

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2.1 Ընթացիկ հարցերի մասին խոսելիս պարոն Սերոբյանը ներկայացրեց, թե ուսումնական տարին սկսելու համար ինչպիսի ֆինանսական միջոցներ են ծախսվել՝ պարետատան հրահանգներին համաձայն անվտանգության կանոնների պահպանման գործընթացը պատշաճ իրականացնելու համար (գնվել են նոր ջերմաչափեր, սպիրտային հավելումներով հեղուկներ, քլորի հիմքով նյութեր և այլն):

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան Ս. Շահպարոնյան
Ռեկտորի խորհրդական՝ Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան

Գրադարան-ուսումնագիտական
խորհրդատվությունների,
նորարարությունների և SS
կենտրոնի տնօրեն՝ Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկանի Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի
դեկան՝ Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ Ա. Մկրտչյան

Անձն.կառ.և իրավ.ապահովման
բաժնի պետ՝ Ա. Հովհաննիսյան